

ԿԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ*

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

karine.arakelyan.2016@mail.ru

ՀԱԿԱՆԻՇՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Երգիծանք, պատմվածք, լեզու, խոսք, բառապաշար, հականիշ, ոճ:

Ներածություն

Հայ երգիծաբանական գրականությունն ունի հարուստ ավանդույթներ և խորը արմատներ:

Իր ծավալային, ժանրային, բովանդակային բազմազանությամբ այն առկա է մեր գրականության ամենավաղ շրջանում, բավական է հիշել Փավստոս Բյուզանդի «Հայոց պատմությունից» մեզ հասած մանրապատումային գրույցները: Տվյալ ժանրը զարգացման գագաթնակետին է հասել XIX–XX դարերում, հատկապես արևմտահայ երգիծաբանության կարկառուն ներկայացուցիչների՝ Հակոբ Պարոնյանի և Երվանդ Օտյանի շնորհիվ: Արևմտահայ գրականության ավանդները շարունակեցին սփյուռքահայ գրագետները, և այս առումով երգիծաբանական գրականությունը բացառություն չէ:

Մասնավորապես, իր մեծ նախորդների՝ Պարոնյանի և Օտյանի գործի փայլուն շարունակողը եղավ Նշան Պեշիկթաշյանը, որը ծնված ու նախնական կրթությունը ստացած լինելով Պոլսում՝ կրողն էր այն վիթխարի ժառանգության, որ թողել էին արևմտահայ գրական ու մշակութային գործիչները: 1922-ին, դժբախտ հանգամանքների բերումով Պոլիսը թողնելով, նա հաստատվել էր Ֆրանսիայում և մինչև իր երկրային կյանքի ավարտը՝ 1972-ը, շուրջ կես դար, իրեն անմնացորդ նվիրել գրականությանը, հատկապես դրա երգիծաբանական ուղղությանը:

Նշան Պեշիկթաշյանի ստեղծագործություններում երգիծանքը դրսևորվել է արձակի ամենատարբեր ժանրերում՝ ակնարկ, պատմվածք, վեպ, թատե-

* Հոդվածը ներկայացվել է 04.09.19, գրախոսվել է 04.09.19, ընդունվել է տպագրության 14.08.20:

Հականիշների ոճական կիրառությունը Նշան Պեշկեթաշյանի...

րախաղ և այլն: Պեշկեթաշյանը դիմել է երգիծանքի բոլոր տեսակներին, որոնց արտահայտման համար ընտրել է զանազան միջոցներ:

Հակառակ սփյուռքահայ գրականության ամենապայծառ ներկայացուցիչներից մեկը լինելու հանգամանքին՝ Նշան Պեշկեթաշյանը ցարդ հատկապես Հայրենիքում, մնում է քիչ ծանոթ և ուսումնասիրված, իսկ նրա լեզվական արվեստի մասին, կարելի է ասել, ոչինչ գրված չէ:

Հականիշները Նշան Պեշկեթաշյանի պարմվածքներում

Տվյալ աշխատանքում կանդիդատանք Պեշկեթաշյանի գեղարվեստական արձակի լեզվին խիստ բնորոշ մի երևույթի՝ հականիշների գործածությանը:

Արտահայտելով հակադիր հասկացություններ՝ հականիշներն ունեն խոսքը ոճավորելու լայն հնարավորություններ, իսկ երգիծական խոսքի դեպքում դրանք ավելի ցայտուն են, քանի որ երգիծանքի հիմքում հենց հակասությունն է խոսքի ու գործի, արտաքինի ու ներքինի կամ ձևի ու բովանդակության միջև:

Մասնագիտական գրականության մեջ ընդունված է հականիշները բաժանել որոշակի խմբերի, որոնցից են լեզվական և խոսքային, բուն կամ համագործածական և համատեքստային կամ անհատական հականիշները¹:

Լեզվական հականիշներն իրենց առաջնային իմաստներով հակադրվում են միմյանց և երբեմն կոչվում են նաև բացարձակ հականիշներ:

Ընդունված է համարել, որ խոսքը ոճավորելու առումով խոսքային հականիշների հնարավորություններն ավելի մեծ են, սակայն չպիտի մոռանանք, որ լեզվական հականիշները ևս ունեն կիրառության շատ լայն շրջանակ և ոճական մեծ արժեք: Բավական է հիշել ժողովրդական տարբեր առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր, դարձվածքներ, ինչպես՝ «Չորը թացի հետ է վառվում», «Ինչ որ ցանես, այն կհնձես», «Շատ մի՛ ատիր, սիրել կա», «Նրբագագն իրեն է տանջում, անզգամը՝ ուրիշին», «Քաջը մեկ անգամ է մեռնում, վախկոտը՝ հազար» և այլն:

Հականիշների խորը իմաստասիրական կիրառություններ ենք տեսնում Աստվածաշնչի ժողովող գրքում, որտեղ մեկ նախադասության մեջ խտացված բազմաթիվ հականիշների միջոցով հեղինակն ի մի է բերում մարդկային ողջ կյանքը, նրա ապրած ժամանակը և հանգում մի հարցի, որի պատասխանը շատ դժվար (եթե ոչ անհնարին) է գտնել. «Ամենեցուն ժամանակ է, եւ ժամ ամենայն իրաց ի ներքոյ երկնից. ժամանակ ծնանելոյ, եւ ժամանակ մեռանե-

¹ Հմմտ. Մելքոնյան 1984, 83:

Առաքելյան Կ.

լոյ, ժամանակ տնկելոյ, եւ ժամանակ խլելոյ զտնկեալն. ժամանակ սպանանելոյ, եւ ժամանակ բժշկելոյ. ժամանակ քակելոյ, եւ ժամանակ շինելոյ. ժամանակ լալոյ, եւ ժամանակ ծիծաղելոյ. ժամանակ կոծելոյ եւ ժամանակ կաքաւելոյ. ժամանակ ձգելոյ քարինս, եւ ժամանակ ժողովելոյ քարինս. ժամանակ գիրկս արկանելոյ, եւ ժամանակ հեռանալոյ ի գիրկս արկանելոյ. ժամանակ խնդրելոյ, եւ ժամանակ կորուսանելոյ. ժամանակ պահելոյ, եւ ժամանակ արտաքս հանելոյ. ժամանակ պատառելոյ, եւ ժամանակ կարկատելոյ. ժամանակ լռելոյ եւ ժամանակ խօսելոյ. ժամանակ սիրելոյ, եւ ժամանակ ատելոյ. ժամանակ պատերազմի, եւ ժամանակ խաղաղութեան: Արդ զի՞նչ առաւելութիւն է այնմ որ առնէ որով ինքն ջանայ»²:

Նշան Պեշկեթաշլլանի երգիծական ստեղծագործություններում այս հականիշները բավական հաճախ են հանդիպում և անչափ օգնում խոսքի արտահայտչականացմանը, վառ գունավորմանը: Սրանց գործածությունն առավել ցայտուն է «Հայ աղբրտիք» գրքում, որտեղ հեղինակն անդրադառնում է զանազան մարզերի հայերի նկարագրին և առանձնահատկություններին, ապա նաև հայ տեսակի հավաքական կերպարին:

Խոսելով խարբերոցիների մասին և ծաղկելով նրանց օտարասիրությունն ու օտարամոլությունը, Հայրենիքը լքելու, օտար ավերում լավ կյանք փնտրելու մոլուցքը, ինչը, ցավոք, բնորոշ է նաև այսօրվա հայ մարդուն, հեղինակը գրում է. «Ամէնուն համար Ամերիկան *նոր* աշխարհն է, իսկ խարբերոցիին համար Ամերիկան *հին* աշխարհն է: Կ'ըսեն, թե Գոլոմպոսի գիտէն առաջ, խարբերոցիները Միսիսիպիի եւ Միսսուրիի ավերէն գաղթած ու եկած հաստատուած են Մուրատ գետին մօտերը, կառուցանելով Խար անուն բերդը: Խարբերոցիներու մեծ մասը ժամանակի ընթացքին վերադարձած է իր բուն ծննդավայրը՝ Ամերիկա»³:

Անշուշտ, նշված *նոր* ու *հին* ածականներն՝ իբրև բացարձակ հականիշներ, ունեն ռմաստեղծ ու պատկերաստեղծ զգալի դեր:

Խոսելով Գոնիայի հայի մասին՝ Պեշկեթաշլլանը խարազանում է նրա ցոփ ու շվայտ կյանքը, օղու, երգի ու պարի, զվարճությունների հանդեպ հիվանդագին սերը և այս ամենն ամփոփում գեղարվեստական մի պատկերով, որտեղ մեծ է լեզվական հականիշների ռմական դերը. «Քեզի *դուրսէն* վառելու

² Աստուածաշունչ մատեան 1997, 693–694:

³ Պեշկեթաշլլեան 1941, 34: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ՝ Հ.աղ. նշումով:

Հականիշների ոճական կիրառությունը Նշան Պեշիկթաշյանի...

չէ, այլ *ներսէն*: Երկիր իջնես, օղի խմես ու այրիս: Կին տեսնես ու այրիս: Ամառը վառիս ու ձմեռը բռնկիս» (Հ. աղ., 44):

Գոնիացու մասին խոհերն ամփոփված են հետևյալ կերպ. «Անշուշտ ամէն գոնիացի մեր նկարագրած գոնիացիին պէս չէ, *բարեբախտաբար*: Եւ սակայն, *դժբախտաբար*, բազմահազար հայեր կան, որոնք նման են մեր ներկայացուցած գոնիացիին» (Հ. աղ., 45):

Դարձյալ ակնառու է բացարձակ հականիշների՝ այս անգամ մակբայ խոսքի մասով արտահայտված, ոճական կիրառությունը:

Հեղինակը սուր հեզնանքով է խոսում կեսարացի հայերի ընչաքաղցության մասին: Այս առիթով նա ստեղծում է գեղարվեստական զանազան պատկերներ՝ կազմված փոխաբերություններից, չափազանցություններից և պատկերավորման այլ միջոցներից, ինչպես. «Կեսարացիին դաւանանքը առուտուրն է, տաճարը՝ շուկան, խորանը՝ խանութը: Իր աստուածը ոսկի հորթը, սուրբը՝ արծաթը, ու սրբուհին կամ սիրուհին՝ գոհարեղէնը» (Հ.աղ., 21):

Ապա նշվածները հեղինակն ամբողջացնում է մեկ այլ պատկերով, որտեղ խոսքի ծանրության կենտրոնը գոյականով ու բայով արտահայտված հականիշներն են և նրանք պատկերաստեղծ են ու ոճաստեղծ:

Աշխարհում տիրող ու օրըստօրե ավելի ու ավելի թափ առնող նողկալի բարքերի պայմաններում «Կեսարացին իր կրօնքին ու պետութեան զօրութեամբ *պատերազմի* մէջ է *խաղաղութեան* ատեն, ինչպէս *խաղաղութեան* մէջ է *պատերազմի* ժամանակ: Իր հայրենիքը *կը սկսի* Կեսարիայէն ու *կը վերջանայ* հոն, ուր ինք կրցած է դիզել քանի մը միլիոն» (Հ.աղ., 21):

Նույնն է պարագան նաև կեսարացու մասին խորհրդածությունների ավարտին. «Ուրեմն կեսարացին շատ ալ *գէշ* մարդ մը չէ, թէւ իրմէ *աղէկները* կարելի է գտնել... դժոխքին մէջ» (Հ.աղ., 24):

Մինչ այժմ մենք խոսում էինք այնպիսի հականիշների մասին, որոնք պատկանում են նույն խոսքի մասին, սակայն դա հականշության համար պարտադիր պայման չէ: «Հականիշները խմբավորելիս նկատի պիտի ունենալ, թե դրանք նու՛յն, թե՛ տարբեր խոսքի մասի են պատկանում: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ հականիշները կարելի է բաժանել երկու խմբի՝ ներխոսքամասային և միջխոսքամասային»⁴:

Միջխոսքամասային հականիշները ևս լայն կիրառություն և ոճական արժեք ունեն Պեշիկթաշյանի ստեղծագործություններում: Իր պատմվածքներից

⁴ Մեղրոնյան 1984, 83:

Առաքելյան Կ.

մեկը՝ «Պանպոլա եւ հայերը», հեղինակը կառուցում է երկու հերոսների երկխոսության միջոցով: Նրանցից մեկը տարագրության մեջ՝ Փարիզում հայտնված ցեղասպանությունից մազապուրծ հայն է, մյուսը՝ սևամորթ միսիոներ: Խոսելով հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած ահազարհուր իրադարձության՝ Մեծ եղեռնի մասին, Պեշիկթաշլյանի հերոսը նշում է, որ այն տեղի ունեցավ մեծ պետությունների անտարբեր հայացքի ներքո, հաճախ էլ նրանց օժանդակությամբ: Խոսակցի զարմացական հարցին, թե «այդ «մեծ»երը ինչո՞վ են մեծ», հետևում է խորիմաստ և խիստ ցավալի պատասխան. «*Մեծ են իրենց պզդիկություններով, իրենց բազմաթիւ փոքրություններով: Այդ բոլոր պզդիկությունները դրէ՛ք վրայ վրայի, կ'ունենաք տխուր մեծություն մը*»⁵:

Միջխոսքամասային հականիշներ են բացում և փակել բառերը՝ օգտագործված «Հայ աղբրտիքի»՝ գոնիացուն նվիրված մասում. «նախ կ'ընէ բացման խօսքը... փակելով ամէնուն բերանը» (Հ.աղ., 44):

Այս հատվածում կա մի հետաքրքիր երևույթ ևս: Հայտնի է, որ կան բառեր, որոնք «հականիշություն են ձեռք բերում հաջորդ եզրում միայն մեկ ածանցի հավելումով... նաև միևնույն բառին հականիշ ածանցների ավելացումով... սակայն միևնույն բառով և ժխտական ածանցով եզր ունեցող բոլոր բառերը չէ, որ կազմում են հականիշ զույգեր»⁶:

Այսպիսի օրինակի հանդիպում ենք նույն «Գոնիացին» գլխում. «Յետոյ կը սկսի *բանախօսութեան՝ ճառելով անբանախօսութեան* մասին, մերթ ընդ մերթ ալ համեմելով իր պերճախօսութիւնը, բացատրութիւններ տալով օղիին բարերար դերին համար, ազգութեան եւ կրօնքի մէջ» (Հ.աղ., 44):

Լեզվական հականիշներից զատ, «խոսքի մեջ շատ հաճախ հականիշային կիրառություն են ստանում այնպիսի բառեր ու բառաձևեր, որոնք առանձին վերցրած միմյանց նկատմամբ հակադիր իմաստներ չունեն, այսինքն՝ լեզվական հականիշներ չեն, նշանակում է՝ խոսքի մեջ բառերի իմաստային տարողունակության սահմանները ընդարձակվում են, և բառերը ձեռք են բերում հակադրական հարաբերություններ արտահայտելու լայն հնարավորություններ»⁷:

Պեշիկթաշլյանի պատմվածքներում խոսքային հականիշները ևս բազմազան են ու բազմաբնույթ: Մասնավորապես, կարող ենք նշել մի ուշագրավ երևույթ: Բառեր, որոնք խոսքի մեջ հակառակ իմաստ են ստանում, արտա-

⁵ Պեշիկթաշլեան 1973, 209:

⁶ Էլոյան 1989, 152–153:

⁷ Էլոյան 1989, 156:

Հականիշների ոճական կիրառությունը Նշան Պեշիկթաշյանի...

հայտնում են տարբեր կրոնների պատկանող հասկացություններ, ինչպես. «Իր սեփական տանը մէջ մատուցող կը շինէ ու կը ջանայ ուրիշին տանը մէջ ալ կանգնել մեհեան մը» (Հ.աղ., 36), «Աստուծոյ կողմէ չէ, որ ստեղծուած է գոնիացին: Ալլահին ձեռքերէն ելած պտուղ մըն է ան» (Հ.աղ., 43), «Կոհն ու կիրքը հեթանոսական են, իսկ սէրն ու սրբութիւնը՝ քրիստոնէական»⁸ և այլն:

Եթե իբրև լեզվական հականիշ կարելի է դիտարկել *գավառացի-քաղաքացի* զույգը, ապա Պեշիկթաշյանի գրչի տակ՝ արևմտահայ միջավայրին համապատասխան, *քաղաքացի* եզրը փոխվել է *պոլսեցիի՝ գավառացիի* հետ կազմելով արդեն խոսքային հականիշների զույգ. «Հակառակ իր ունեցած շնորհաց ծաղիկներուն՝ *գավառացի* մեր քոյրերն ու եղբայրները, ընդհանրապէս եւ բնականաբար, չեն սիրեր *պոլսեցին*» (Հ.աղ., 5): Նույն պոլսեցու մասին խոսելիս հեղինակն օգտագործել է նաև խոսքային այլ հականիշներ. «Պոլսեցին ընդհանրապէս *ազգասէր* է, բայց ոչ *հայրենասէր*: Այս վերջին տարիներս եղած է «*Հայաստանասէր*», եւ ինչու՞ չըլլայ, քանի որ հեռու է Հայաստանէն...» (Հ. աղ., 6) կամ «Ան քաջառողջ է իբրեւ *Քիզանդացի*, հիւանդ է իբրեւ *Հայ* ու թաղած են զինքը իբրեւ *Հայաստանցի*» (Հ.աղ., 6):

Հականիշների գործածությունը հաճախ չի սահմանափակվում մեկ նախադասության սահմաններում, և ամենատարբեր հականիշներ կիրառված ենք տեսնում իրար հաջորդող մտքերում: Այսպիսի դեպքերում արատավոր երևույթը ներկայացվում է հականիշների շղթայի միջոցով, ինչպես «Շատակերութիւն եւ սակաւակերութիւն» պատմվածքում, որի վերնագիրն իսկ հականիշային զույգ է: Այստեղ սուր ծաղրի առարկա է դարձել ֆրանսիացի հոգեբույժի դասախոսությունը, դոկտորի մտավոր սնանկությունն ու կեղծավորությունը: Բանախոսը քննադատում է շատակերությունը, մատնանշում դրա վնասակար ազդեցությունը և գովում սակավակերությունը, նույնիսկ սովը. «Գիւղի մը մէջ հանդիպեցայ իննսունվեց տարեկան թշուառ ծերուկի մը, որուն հարցուցի. «Ինչպե՞ս ապրած ես, մե՞ծ հայրիկ...»: Ալեւորը պատասխանեց. «Ապրած եմ թշուառ կեանք մը, գրեթէ կէս անօթի: *Քիչ* կերած եմ ու *շափ* կ'ապրիմ: Ճաշս *կարճ* է եղած, իսկ կեանքս եղաւ *երկար*: Ասոր իմ խելքս չէ հասած»: Ծերուկը չէր գիտեր, որ իր *երկար* կեանքը կը պարտի իր *կարճ* ճաշերուն» (Բ. եւ հ., 71):

Պատմվածքի ավարտին, սակայն, պատռվում է կեղծ բարեպաշտի դիմակը, երբ հոգեբույժի մուրացիկ դարձած ազգականը հայտարարում է. «Այդ

⁸ Պեշիկթաշյան 1964, 61: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ՝ Բ. եւ հ. նշումով:

Առաքելյան Կ.

անզգամը հորեղբորս տղան է: Գիտե՞ք թե ո՞րչափ կ'ուտե ինք: Երեք խոզէ աւելի» (Բ. եւ հ., 72):

Խոսքային հականիշներ ստեղծվում են նաև անսպասելիության հիման վրա, երբ առաջին հայացքից միանգամայն տարբեր, որևէ առնչություն չունեցող հասկացություններ հակադրվում են միմյանց և խոսքային համապատասխան միջավայրում դառնում ոճակիր, ասելիքին հաղորդում յուրահատուկ հմայք՝ այն դարձնելով առավել կենդանի ու ինքնատիպ, ինչպես «Սիրեցե՛ք, սիրուեցե՛ք...» խոհական պատմվածքում *հերոս* և *միմոս* բառերի հակադրությունը. «Սիրոյ ի՛նչ ըլլալը հասկնալու համար, անոր շուրջը դառնալէ աւելի, պէտք է ոտքով գլուխով անոր մէջը նետուիլ եւ մկրտուիլ: Եւ հասկնալ, թէ սիրոյ վիճակահանութիւնը ի՛նչ վիճակի մէջ դրած է նետուողը: Անձէ անձ կը տարբերի ամէն արդիւնք: Մարդ կայ, որ սիրոյ վիճակահանութենէ դուրս կ'ելլէ իբրեւ *հերոս*, մարդ ալ կայ, որ դուրս կ'ելլէ իբրեւ *միմոս*» (Բ. եւ հ., 58):

Գեղարվեստական գրականության մեջ երբեմն կարելի է հանդիպել մի երևույթի, որ ոճագիտության մեջ հոմանշային կրկնություն անունն է ստացել: Այն շատ է նպաստում խոսքի արտահայտչականացմանը և հարստացմանը զանազան նրբերանգներով, քանի որ «հոմանիշները միշտ ունենում են նաև չհամընկնող տարրեր՝ կամ առարկայական-տրամաբանական իմաստի մեջ, կամ կոննոտացիայում: Այդ իսկ պատճառով հոմանշային կրկնությունը հնարավորություն է ընձեռում առավել ամբողջական և բազմակողմանիորեն բացահայտելու և նկարագրելու առարկան»⁹:

Հետաքրքրական է, որ Պեշկիթաշլյանի պատմվածքներում հանդիպում ենք սրա հակառակ երևույթին՝ հականիշների կրկնությանը, ինչը, սակայն, ծառայում է նույն նպատակին՝ նկարագրվող առարկայի, անձի, երևույթի առավել համակողմանի բնութագրմանը: Բերենք երկու օրինակ «Հայ աղբրտիքի» «Վանեցիին» և «Հայը» գլուխներից, որոնցում հեղինակը համապատասխանաբար վանեցուն և հային բնութագրելու համար դիմել է հականիշների կրկնության և բնութագրությունները դարձրել ավելի խորը ու բազմաշերտ, ինչպես. «Վանեցիին քսակը *գոց* է, սակայն, սեղանը *բաց*: Ձեռքը *գոց* է, բերանը *բաց*: Գլուխը *գոց* է, ճակատը *բաց*: Վանեցիին ականջը *գոց* է, սակայն, աչքը շատ *բաց*» (Հ.աղ., 11):

Նաև. «Հայուն մէջ երկու հոգի կայ.-*Վախկոյր* մը եւ *քաջ* մը կամ *սպրուկ* մը եւ *հերոս* մը: Ամէն ազգի մեջ *Վախկոյր* կը կծկուի *քաջին* ետեւը. ընդհա-

⁹ Арнольд 1973, 130.

Հականիշների ոճական կիրառությունը Նշան Պեշիկթաշյանի...

կառական է Հայուն մէջ, քաջը կը գտնուի *վախկոտին* տակը: Ամէն բռնակալ կրնայ իր առաջին հոգին հանել: Հանե՞ց. սոսկալի է հրաշքը: Կը ցցուի պահեստի հոգին, խենթի նման: Ու կը զարնէ: Եւ իր հարուածը անսխալական է... Երբ վտանգի օրերը անցնին, Հայը կը մեռնէ իր միջի *հերոսը* ու *վախկոտին* հետ քաջաբար շուկայ կ'իջնէ՝ գրաւելու համար Ոսկեբերդ մը» (Հ. աղ., 55–56):

Գեղարվեստական խոսքի ոճավորման գործում իր ուրույն տեղն ունի օքսիմորոնը: Այն ոճական հնար է, «որն արտահայտվում է իմաստով միանգամայն հակադիր և տրամաբանորեն մեկը մյուսին բացառող բառերի կապակցությամբ»¹⁰:

Շնորհիվ իր այս՝ կառույցի երկու եզրերի հակադիր նշանակություն ունենալու հանգամանքին, օքսիմորոնը լայն կիրառություն ունի նաև երգիծական գրականության մեջ: Նշան Պեշիկթաշյանի երգիծական արձակը բացառություն չէ այս առումով, և նրա պատմվածքներում հանդիպում են տարբեր օքսիմորոններ, որոնց եզրերն արտահայտում են լիարժեք կամ մասնակի հակադրություն, ինչպես. «Ես *խելքով առողջ խենթ* մըն եմ» (Բ. եւ հ., 62), «*Շնորհալի գիժն* է Տարօնցին՝ վարձատրուած Ս. Կարապետէն» (Հ. աղ., 50) և այլն:

Հեղինակի օգտագործած օքսիմորոնները կարելի է քաղաքական երգիծանքի միանգամայն հաջողված նմուշներ համարել: Նա ստեղծել է երգիծաբանության մեջ բավական տարածված «գրպանի բառարանը», որի *ազգ* բառի «բառահոդվածում» կարդում ենք. «Միլիոնաւոր մարդոց միութիւն մը, իր անմիաբանութեամբ անուանի թէ՛ դաւանական, թէ՛ դասակարգային, թէ՛ դաւադրական, թէ՛ գաղափարական, թէ՛ գեղեցկագիտական հարցերու մէջ: Այս միլիոնաւոր *միութենական անմիաբանները* երբեմն կ'ակմբուին միեւնոյն կրկէսին մէջ՝ խաղալու, խեղկատակելու, դիմակաւորուելու, դերակատարելու, նոյնիսկ իրարու արիւն թափելու համար»¹¹:

Հականիշները լայն գործածություն ունեն հակադրություններում: Հակադրությո՞ւն ոճական արտահայտչամիջոց է, որով հակադիր իմաստ ունեցող բառերի գործածությամբ հակադրվում են առարկաներ, հատկանիշներ, երևույթներ: Գեղարվեստական գրականության մեջ հակադրությո՞ւն մեծ տարածում ունի: Մասնագիտական գրականության մեջ հակադրության փայլուն օրինակ է համարվել Շեքսպիրի մադրիգալը, որտեղ «օբյեկտիվ իրականության երևույթները ոչ թե ընդհանուր հատկանիշներով մերժենում են, այլ ավելի են հեռա-

¹⁰ Պետրոսյան, Գալստյան, Ղարազուլյան 1975, 314:

¹¹ Պեշիկթաշյան 1963, 2:

Առաքելյան Կ.

նում միմյանցից: Երիտասարդության և ծերության հակադրությունը տարվում է երկու հասկացությունների բոլոր բնորոշ գծերի միջև:

Grabbed age and youth cannot live together:

Youth is full of pleasure, age is full of care;

Youth like summer morn, age like winter weather;

Youth like summer brave, age like winter bare.

Youth is full of sport, age's breath is short;

Youth is nimble, age is lame;

Youth is hot and bold; age is weak and cold;

Youth is wild, and age is tame

Age, I do abhor thee, youth I do adore thee;

Oh! My Love, my Love is young»¹².

Երգիծական գրականության մեջ այս մոտեցումը հաճախ է կիրառվել, և դրա ցայտուն օրինակ կարելի է համարել բանաստեղծի ճառը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վիպակում, որտեղ լեզվական ու խոսքային հականիշների կիրառությամբ կազմված հակադրությունների, տրամաբանությունից բացարձակապես զուրկ խոսքի միջոցով հեղինակը բացահայտել է իր կերպարի՝ բանաստեղծի փուլ էությունը. «անոնք անցյալ են, մենք՝ ապառնի, անոնք խավար են, մենք լույս, անոնք տգետ են, և մենք՝ գիտուն, անոնք սուր են, մենք՝ զրիչ, անոնք ատելություն են, մենք՝ սեր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղեն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուլ են, մենք՝ վարդ...»¹³:

Նշան Պեշկոթաշյանը երգիծական տարբեր իրավիճակներ, երևույթներ նկարագրելու համար ևս հաճախ դիմել է հակադրությունների: «Բժշկական նամականիում» կարդում ենք մի հարց ու պատասխան, որտեղ մի քանի հականիշ զույգեր կազմել են հակադրության հրաշալի օրինակներ՝ խոսքը դարձնելով ավելի ընդգծված, հումորային ու արտահայտիչ. «Հարցում. – Տարօրինակ վիճակ մը ունիմ: Աջ ոտքս միշտ չափազանց *տաք* է, իսկ *ձախ* ոտքս ալ սաստիկ *պաղ* է: *Յերեկը* այնքան զգալի չէ ոտքերուս իրարու հակապատկեր ըլլալը, բայց *գիշերը* մեծապէս զգալի է ու անտանելի: Կրնամ ազատիլ այս տարօրինակ վիճակէս... Պատասխան. – Այդ այլանդակ վիճակը ունեցողները յայտնապէս լերդային հիւանդութիւն ունեցողներն են: Ամբողջ պատասխանատուն

¹² Гальперин 1958, 241–242:

¹³ Պարոնյան 1954, 396:

Հականիշների ոճական կիրառությունը Նշան Պեշիկթաշյանի...

լեարդն է: Գիշերները, այդ վիճակը ունեցողներուն աջ ոտքը կարծէք կը գտնուի *այրեցեալ գօրիի* մէջ, իսկ ձախ ոտքը՝ *սառուցեալ ովկէանոսի* մը մէջ: Կամ աջ ոտքը *փռուի* մը մէջ է, իսկ *ծախը՝ սառնարանի* մէջ: Այդպիսիները իրենց աջ ոտքը դուրս կը հանեն վերմակէն, մինչդեռ *ծախ* ոտքը վերմակին տակ... » (Բ. եւ հ., 64):

Հակասությունների ու հակադրությունների հիման վրա կառուցվում են նաև ամբողջական գրական ստեղծագործություններ: Դրա լավագույն օրինակ է համարվել Չ. Դիքենսի «Երկու քաղաքների պատմություն» վեպը, որն անդրադառնում է 1789–1794 թթ. Ֆրանսիական բուրժուական հեղափոխությանը: Այստեղ «առկա են նախևառաջ հանրային հակասություններ, որոնք հանգեցնում են հեղափոխական հզոր պայթյունի: Բացի դրանից այստեղ հակադրվում են երկու երկրներ՝ Ֆրանսիան ու Անգլիան, և վերնագրում հիշատակված երկու քաղաքները՝ Փարիզն ու Լոնդոնը... Վեպի առաջին գլուխը, որը հեղինակն անվանել է «Շրջան», և որը պատմական էքսկուրս է ու նախապատրաստություն՝ հիմնական գործողություններին, կազմված է իրական ու լեզվական հակասությունների հիման վրա... «It was the best of times, it was the worst of times, it was the age of wisdom, it was the age of foolishness, it was the epoch of belief, it was the epoch of incredulity, it was the season of light, it was the season of darkness, it was the spring of hope, it was the winter of despair, we had everything before us, we had nothing before us, we were all going direct to Heaven, we were all going direct the other way...»¹⁴:

Ինչպես տեսնում ենք, այստեղ նույն երևույթը՝ նույն ժամանակը բնութագրվում է հակադիր, իրարամերժ հասկացություններով, ինչը հնարավորություն է տալիս երևույթը դիտարկել իր ամբողջության մեջ, բազմակողմանի, բազմաշերտ, ասելիքին հաղորդում է պատկերավորություն, արտահայտչականություն, գաղափարական հագեցվածություն, նաև՝ խորը փիլիսոփայական ենթատեքստ:

Նմանատիպ դեպքերի կարելի է հանդիպել Նշան Պեշիկթաշյանի արձակում: Հային նվիրված իր խորհրդածություններում հեղինակը հատկապես խոսքային հականիշների միջոցով ստեղծել է երգիծական բազմաշերտ պատկերներ և հայի տեսակը ներկայացրել խիստ բազմակողմանի՝ մի դեպքում հումորով, մի դեպքում կծու հեգնանքով. «Առաջին քննութեամբ կ'ըսես.-թիւ է ան: Կը կարդաս իր թուանշանները ու կը տեսնես, որ տակէն կ'ելլեն բառեր,

¹⁴ Плевина 1980, 140–141.

Առաքելյան Կ.

կ'ըսես.-*խոսք է ան*: Կ'ընթեռնուս խօսքերը ու կը գտնես, որ *ոտանաւոր է*: Կը նկատես սակայն որ բնաւ չափ չունի ու կ'եզրակացնես.- *հանելուկ է եղեր...* Հայը *աշխատանք* կը կարծես ու կ'ըսես իրեն.- Ինչքա՞ն գործունեայ ես, եկուր միասին քրտինք թափենք հանրային գործի մը համար: Կուգայ, բայց ատեն մը վերջը կը խորհրդածես.- Ան *գործի մարդ է անձնական ձեռնարկի մէջ* ու *խոսքի մարդ՝ հանրային ձեռնարկի մէջ ...* Հայը, երբ *կուսակցական է*, կը ճառէ *ազատութենէ*, երբ *չէզոք է*, կը խօսի *միութենէ*: Իբր մարդ *անիշխանական է*, իբր Հայ՝ *ազգայնական»* (Հ. աղ., 52-53):

Ոճագիտության մեջ այն կարծիքն է հայտնվել, որ հակադրույթը սովորաբար կազմվում է նախադասությունների շարահարական կապակցությամբ: Եթե հակադրույթի բաղադրիչների կապակցությունը շաղկապական է, ապա հաճախ կիրառվում են միավորիչ շաղկապներ: Հակադրական շաղկապների առկայության դեպքում հակադրույթի ոճական ազդեցությունը զգալիորեն նվազում է, քանի որ «այս շաղկապի ներհակական իմաստն ինքին ընթերցողին նախապատրաստում է հակասական արտահայտության, որը հետևելու է, օրինակ.

The cold in clime are cold in blood,
Their love can scarce deserve the name;
But mine was like a lava flood
That boils in Etna 's breast of flame. (Byron)»¹⁵:

Կարծում ենք՝ միշտ չէ, որ հակադրական շաղկապները նվազեցնում են խոսքի տպավորությունը: Դրանում կարող ենք համոզվել՝ կարդալով մի հատված Պեշկեթաշյանի «Վայրենի մը» պատմվածքից, որը ներկայացնում է սևամորթ աֆրիկացու և եվրոպացու զրույցը, որտեղ աֆրիկացին քննադատում է կեղծ քաղաքակրթությունն ու նրա արժեհամակարգը. «Մենք՝ վայրենիներս, դուրսէն սեւ ենք, *սակայն* ներսէն սպիտակ: *Իսկ* դուք դուրսէն ճերմակ էք ու ներսէն սեւ... Մենք կ'ուտենք, երբ անօթի ենք, *մինչդեռ* դուք կ'ուտիք, երբ անօթի էք ու կ'ուտէք, երբ կուշտ էք» (Հ. աղ., 69):

Եզրակացություններ

Անշուշտ, նշված օրինակներով չեն սահմանափակվում հականիշների կիրառությունները Նշան Պեշկեթաշյանի երգիծական պատմվածքներում: Դրանք խիստ բազմազան են ու բազմաբնույթ, և բոլորին անդրադառնալ մեկ հոդվածի շրջանակում՝ պարզապես անհնար է: Ասվածը բավական է փաստե-

¹⁵ Гальперин 1958, 244:

Հականիշների ոճական կիրառությունը Նշան Պեշիկթաշյանի...

լու, որ Պեշիկթաշյանի ստեղծագործության մեջ հականիշներն ունեն լայն գործածություն և ուրույն ոճական դեր: Հաճախ այս միավորների առկայության հետ է կապված խոսքի արտահայտչականությունը, հագեցվածությունը, ազդեցիկությունը և այլ արժանիքներ: Հականիշները կարևոր մասնակցություն ունեն հակադրությունների կազմության մեջ, որը ոճական զորեղ արտահայտչամիջոց է և երգիծական խոսքի կարևոր բաղադրիչ: Հակադրությունը Պեշիկթաշյանի համար մտածելակերպ է, հատու միջոց թափանցելու իրերի, երևույթների ու հոգիների խորքը, վերհանելու շատերին առաջին հայացքից անտեսանելի գաղտնարանները, անխնա ծաղկելու ամեն կարգի արատները, փնտրելու ապաքինման եղանակները:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց 1997, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 1450 էջ:

Էլոյան Ս. 1989, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, ԳԱ հրատարակչություն, 258 էջ:

Մեքրտչյան Ս. 1984, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, «Լույս» հրատարակչություն, 248 էջ:

Պարոնյան Հ. 1954, Ընտիր երկեր, գիրք 1, Երևան, Հայպետհրատ, 576 էջ:

Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազուլյան Թ. 1975, Լեզվաբանական բառարան, Երևան, ԳԱԱ հրատարակչություն, 328 էջ:

Պեշիկթաշեան Ն. 1964, Բժիշկներ եւ հիւանդներ, Պէյրութ, հրատարակութիւն «Բժիշկ» ամսագրի, տպարան Ատլաս, 82 էջ:

Պեշիկթաշեան Ն. 1963, Գրպանի բառարան, «Բագին», ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրութ, թիւ 9, էջ 1-9:

Պեշիկթաշեան Ն. 1941, Հայ աղբրտիք, Փարիզ, մատենաշար «Արմենական մշակոյթ», թիւ 1, 82 էջ:

Պեշիկթաշեան Ն. 1973, Հնդկահաւեր, Պէյրութ, 648 էջ:

Арнольд И. 1973, Стилистика современного английского языка, Ленинград, «Просвещение», 304 с.

Гальперин И. 1958, Очерки по стилистике английского языка, Москва, изд.-во иностранной литературы, 462 с.

Плевина Н. 1980, Стилистический анализ художественного текста, «Просвещение», Ленинград, 272 с.

СТИЛИСТИЧЕСКОЕ ИСПОЛЬЗОВАНИЕ АНТОНИМОВ В РАССКАЗАХ НШАНА ПЕШИКТАШЛЯНА

АРАКЕЛЯН К.

Резюме

Ключевые слова: сатира, рассказ, язык, речь, лексика, антоним, стиль.

В армянской литературе сатирический жанр достиг своего апогея в XIX–XX вв., в частности, в творчестве западноармянских писателей Акопа Пароняна и Ерванда Отяна. Традиции западноармянской литературы переняли писатели Спюрка (Дияспоры) и в их числе Ншан Пешикташлян, ставший одним из ярких сатириков в литературе диаспоры.

Проза Ншана Пешикташляна изобилует антонимами, которые придают тексту особую стилистическую окрашенность и экспрессию. Антонимы играют важнейшую роль в создании антитезы как экспрессивного средства и составной части сатирической речи.

THE STYLISTIC USE OF ANTONYMS IN THE STORIES OF NSHAN PESHIKTASHLIAN

ARAKELYAN K.

Summary

Key words: satire, story, language, speech, vocabulary, antonym, style.

In the Armenian literature the genre of satire reached its apogee in the 19th – 20th centuries, in the works of such Western Armenian writers as Hagob Paronian, Yervand Otian. Being one of the most brilliant satirists in the Diaspora literature, Nshan Peshiktashlian followed the legacy of the Western Armenian writers.

Nshan Peshiktashlian's fiction teems with antonyms, which endow the text with unique stylistic coloring and expressiveness. Antonyms play a significant role in the creation of antithesis, which as figure of speech, is an integral component of satiric speech.